Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
17.11.2026 թ. թիվ 294Ա որոշմամբ

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

(2025 թվականի 4-րդ եռամսյակ – 2026 թվականի 3-րդ եռամսյակ)

2025 թվականի 4-րդ եռամսյակից մինչև 2026 թվականի 3-րդ եռամսյակը ներառյալ ժամանակահատվածում ՀՀ-ում գնաճային միջավայրն աստիճանաբար ընդլայնվել է: Այն հիմնականում արտացոլում է ներմուծվող և տեղական ոչ սեզոնային պարենային ապրանքներից փոխանցվող գնաճային ազդեցությունները, որոնք պայմանավորված են վերջին եռամսյակներում համաշխարհային տնտեսությունից փոխանցվող գնաճային ճնշումներով և ներքին տնտեսությունում առաջարկի առանձին գործոններով: 2026 թվականի սկզբից գնաճի արագացմանը նպաստել են նաև առողջապահական ծառայությունների գների որոշակի ավելացումը՝ պայմանավորված առողջության համապարփակ ապահովագրության համակարգի ներդրմամբ, ինչպես նաև Մերձավոր Արևելքում հակամարտության սրման պայմաններում էներգակիրների զգալի գնաճը: Դիտարկվող ժամանակահատվածում բնականոն գնաճը ևս ավելացել է՝ ըստ ապրանքախմբերի աստիճանաբար կրելով ավելի համատարած բնույթ, ինչը, բացի առաջարկի գործոններից, վկայում է նաև ձևավորված բարձր պահանջարկի պայմանների մասին:

Հաշվետու ժամանակահատվածում, չնայած որոշակի տատանողականությանը, արձանագրվել է բարձր տնտեսական աճ և ակտիվություն, ինչին շարունակել են մեծապես նպաստել շինարարության և ծառայությունների ճյուղերի զարգացումները՝ մատնանշելով ավելցուկային պահանջարկի առկայությունը: Վերջինիս, հատկապես ընթացիկ տարվա երկրորդ եռամսյակից, էապես նպաստել է նաև արտաքին պահանջարկի ընդլայնումը՝ առավելապես արտահայտվելով դեպի ՀՀ այցելությունների և դրանց տևողության աճով, ինչը ձևավորել է նաև էական ռիսկեր համապատասխան ոլորտներում աշխատավարձերի աճի և ծառայությունների գների արագացման ուղղությամբ: Այս համատեքստում, հաշվետու ժամանակաշրջանում քննարկված Ա տիպի սցենարները կապված են եղել տնտեսությունում ձևավորված ավելցուկային պահանջարկի պայմանների հետագա ընդլայնման և գնաճային ճնշումների ուժգնացման ռիսկերի հետ: Մասնավորապես՝ աշխարհաքաղաքական լարվածության հնարավոր սրման պայմաններում դեպի ՀՀ այցելությունների հետագա արագացումը, ինչպես նաև հայկական ակտիվների նկատմամբ հետաքրքրության աճով և արտաքին «մղող» գործոններով պայմանավորված՝ դեպի ՀՀ կապիտալի զգալի հոսքերի պահպանումը կամ դրանց ավելացումը կարող էին նպաստել ներքին տնտեսությունում պահանջարկի պայմանների լրացուցիչ ընդլայնմանը:

Մյուս կողմից՝ դիտարկվել են Բ տիպի սցենարներ՝ կապված աշխարհաքաղաքական մեծ անորոշության երկար պահպանման և հիմնական գործընկեր երկրներում, մասնավորապես ՌԴ-ում, կառուցվածքային խնդիրների խորացման պայմաններում տնտեսական աճի և դրա հեռանկարի վատթարացման, ինչպես նաև ՀՀ երկրի ռիսկի հավելավճարի հիմնարար նվազման հետ: Ավելին՝ ՌԴ-ի կողմից ՀՀ արտահանողների համար ներմուծման ստանդարտների խստացումը կարող էր հանգեցնել ՀՀ-ում եկամուտների և պահանջարկի թուլացմանը՝ ունենալով նաև ուղղակի գնանկումային ազդեցություն՝ պայմանավորված առանձին շուկաներում ավելցուկային առաջարկի ձևավորման ռիսկերով:

Ստեղծված իրավիճակում, հաշվետու ժամանակահատվածի սկզբում ԿԲ-ն, շարունակելով նախորդ շրջանում մեկնարկած դրամավարկային քաղաքականության աստիճանական նորմալացման գործընթացը, 2025 թ. դեկտեմբերին նվազեցրել է քաղաքականության տոկոսադրույքը 0.25 տոկոսային

կետով՝ դրամավարկային պայմանները մոտեցնելով շուկայի մասնակիցների կողմից գնահատվող չեզոք դիրքին: Հարկ է նշել, որ հաշվետու ժամանակահատվածի սկզբում 12-ամսյա գնաճը դանդաղել է՝ 2025 թ. դեկտեմբերին ձևավորվելով թիրախի շուրջ՝ 3.3% մակարդակում:

Հետագա ամիսներին, հիմնականում առաջարկի գործոնների ազդեցությամբ և պահանջարկի որոշակի ընդլայնման պայմաններում, գնաճը սկսել է արագանալ: Այսպես՝ այդ թվում Մերձավոր Արևելքի հակամարտությամբ պայմանավորված էներգակիրների և պարենի համաշխարհային գների աճով, 12-ամսյա գնաճը 2026 թ. ապրիլին կազմել է 5.3%, իսկ բնականոն գնաճը՝ 4.9%, որից հետո երկուսն էլ դրսևորել են որոշակի դանդաղման միտումներ՝ այդուհանդերձ պահպանվելով թիրախից բարձր՝ սեպտեմբերին կազմելով համապատասխանաբար 4.3% և 4.7%: Նման պայմաններում, 2026 թվականի փետրվար-օգոստոս ժամանակահատվածում, հիմնականում կարևորելով երկու ուղղությամբ ռիսկերի կառավարման հավասարակշռումը՝ ՀՀ ԿԲ խորհուրդն անփոփոխ է թողել քաղաքականության տոկոսադրույքը, իսկ սեպտեմբերին Ա տիպի ռիսկերի նյութականացման հետևանքով հնարավոր մակրոտնտեսական ազդեցությունների կառավարման անհրաժեշտությունից ելնելով՝ բարձրացրել է այն 0.25 տոկոսային կետով՝ սահմանելով 6.75%:

1. ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

Հաշվետու ժամանակահատվածում, մակրոտնտեսական միջավայրում ձևավորված զգալի անորոշությունների պայմաններում, դրամավարկային քաղաքականության մշակման և որոշումների կայացման ընթացքում դիտարկվել են մի շարք սցենարներ: Մի կողմից՝ շուկայական սպասումների համեմատությամբ ավելի բարձր տոկոսադրույքների ուղեգծի սահմանման Ա տիպի սցենարները ներառել են ձևավորված աշխարհաքաղաքական իրավիճակի, ԱՄՆ-ում և ՀՀ-ում հարկաբյուջետային քաղաքականության զարգացումների պայմաններում համաշխարհային ու ՀՀ չեզոք տոկոսադրույքի հնարավոր աճի և ՀՀ ռիսկի հավելավճարի բարձր մակարդակում ձևավորման, ինչպես նաև ներքին տնտեսությունում ավելցուկային պահանջարկի առկայության ու հետագա ընդլայնման և գնաճային սպասումների ավելացման հետ կապված ռիսկերը: Մյուս կողմից՝ շուկայական սպասումների համեմատությամբ ավելի ցածր տոկոսադրույքների ուղեգծի ձևավորման Բ տիպի սցենարներից քննարկվել են անշարժ գույքի գների աստիճանական, բնականոն ճշգրտման պայմաններում շինարարության և տնտեսության հարակից ոլորտներում աճի, պահանջարկի թուլացման ու գնանկումային ազդեցությունների ձևավորման, ներքին ու արտաքին պահանջարկի և աշխատանքի շուկայի պայմանների արագ մեղմման, ինչպես նաև համաշխարհային պահանջարկի դանդաղման հեռանկարի, ՌԴ-ի կողմից ներմուծման ստանդարտների խստացման հավանական ազդեցությունների և ՀՀ ռիսկի հավելավճարի հիմնարար նվազման հետ կապված ռիսկերը: Նշված անորոշությունների պայմաններում ռիսկերի խելամիտ կառավարմամբ իրականացվող դրամավարկային քաղաքականությունն ուղղված է եղել միջնաժամկետ հորիզոնում 12-ամսյա գնաճի և գնաճային սպասումների՝ նպատակային ցուցանիշի շուրջ կայունացմանը:

Հաշվետու տարում աշխարհաքաղաքական և տնտեսական քաղաքականությունների էական վերադասավորումների, ձևավորված մեծ անորոշության ու ռիսկերի պայմաններում, համաշխարհային տնտեսական աճը և դրա հեռանկարը աստիճանաբար վատթարացել են: Մասնավորապես՝ ԱՄՆ-ում ՀՆԱ աճը դրսևորել է զգալի տատանողականություն. ընդհանուր առմամբ, դանդաղել է և ձևավորվել է ավելի կայուն մակարդակում: Այդուհանդերձ, ներքին պահանջարկը պահպանվել է հարաբերականորեն բարձր, իսկ մասնավոր սպառումը և հիմնական կապիտալում, հատկապես ԱԲ-ի հետ կապված, տեխնոլոգիական և ենթակառուցվածքային ներդրումները շարունակում են տնտեսական աճի հիմնական շարժիչ ուժերը հանդիսանալ: Միաժամանակ, ԱԲ-ի ներդրումային շրջափուլի տևականության և դրանց արդյունավետ կիրառման շուրջ անորոշությունը, ինչպես նաև ֆինանսական ակտիվների գների հնարավոր ճշգրտումները տնտեսական աճի և պահանջարկի հեռանկարի համար ներքևի ուղղությամբ ռիսկեր են պարունակում: Եվրոգոտում և Չինաստանում տնտեսական աճի շարունակական դանդաղումն արտացոլում է առկա կառուցվածքային խնդիրները, տնտեսության բևեռացումը և թույլ ներքին պահանջարկը, ինչպես նաև Մերձավոր Արևելքի հակամարտության բացասական ազդեցությունները, ինչի պարագայում միջնաժամկետ և երկարաժամկետ հատվածում մարտահրավերները պահպանվում են: Ռուսաստանում տնտեսական աճը զգալիորեն թուլացել է: Աճին շարունակում են զգալի դրական նպաստ ունենալ առևտրի և ծառայությունների ճյուղերը՝ արտացոլելով խթանող

հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը: Միաժամանակ, նավթի գների բարձր մակարդակներում երկար պահպանումը նպաստում է նավթագազային եկամուտների ավելացմանը և հարկաբյուջետային տարածքի որոշակի ընդլայնմանը՝ ստեղծելով տնտեսական ակտիվության լրացուցիչ խթանման հնարավորություններ: Աշխատաշուկայի պայմանները մնում են խիստ, իսկ միգրացիոն քաղաքականությունն աշխատուժի առաջարկի լրացուցիչ սահմանափակման ռիսկեր է պարունակում:

Հաշվետու ժամանակահատվածի առաջին կեսին համաշխարհային գնաճն աստիճանաբար դանդաղել է, այնուհետև ավելացել՝ առավելապես արտացոլելով էներգակիրների գների կտրուկ աճը: 2026 թ. սկզբից Մերձավոր Արևելքում աշխարհաքաղաքական լարվածության սրման և առևտրային ուղիների խաթարման պայմաններում նավթի համաշխարհային գները զգալիորեն աճել են՝ երրորդ եռամսյակում գերազանցելով 100 ԱՄՆ դոլար/բարել մակարդակը: Ավելին, նավթի ռազմավարական պաշարների և չօգտագործված արտադրական հզորությունների նվազումը մեծացրել է շուկայի խոցելիությունն առաջարկի հնարավոր նոր ցնցումների նկատմամբ: Զուգահեռաբար՝ էներգակիրների գների բարձրացման հետևանքով արտադրության և փոխադրման ծախսերի ավելացումը, ինչպես նաև պարենային ապրանքների կարևոր մատակարար մի շարք երկրներում եղանակային անբարենպաստ պայմանները նպաստել են նաև պարենի համաշխարհային գների և դրանց տատանողականության զգալի աճին: Մերձավոր Արևելքի հակամարտության մեկնարկից ի վեր, 2026 թվականի սեպտեմբերի դրությամբ, պարենի միջազգային գներն աճել են շուրջ 8%-ով: Արդյունքում՝ հաշվետու տարվա ընթացքում արտաքին հատվածից ՀՀ տնտեսություն փոխանցվել են հիմնականում գնաճային ազդեցություններ՝ մասնակիորեն մեղմվելով ՀՀ դրամի փոխարժեքի անվանական արժևորմամբ:

ԱՄՆ-ում և ԵԳ-ում 12-ամսյա, ինչպես նաև կոշտ գներով բնութագրվող ապրանքների և ծառայությունների գնաճը շարունակել է ձևավորվել թիրախից կայուն բարձր մակարդակներում: Միաժամանակ, էներգակիրների համաշխարհային գների զգալի տատանողականության և բարձր մակարդակում պահպանման պայմաններում գնաճային միջավայրի հետագա ընդլայնման ռիսկերը պահպանվում են: Արդյունքում, հաշվետու ժամանակահատվածի վերջին առաջատար մի շարք երկրների կենտրոնական բանկեր սկսել են բարձրացնել քաղաքականության տոկոսադրույքները, իսկ ֆինանսական շուկաներում տոկոսադրույքների սպասվող ուղեգծերն էապես վերանայվել են դեպի վեր՝ արտացոլելով դրամավարկային պայմանների հետագա խստացման և ավելի երկար պահպանման սպասումները:

Դիտարկվող ժամանակահատվածում Հայաստանում տնտեսական աճը և ակտիվությունը, չնայած վերջին շրջանում որոշակի դանդաղմանը, ընդհանուր առմամբ պահպանվել են երկարաժամկետ կայուն աճի գնահատվող ցուցանիշից բարձր: Տնտեսական բարձր աճին շարունակել է էականորեն նպաստել շինարարության և ծառայությունների ճյուղերի՝ հիմնականում պահանջարկի ընդլայնմամբ շարժվող մի շարք ենթաճյուղերում արձանագրված բարձր աճը, ինչն ուղեկցվել է նաև վարկավորման, ներմուծման և մանրածախ առևտրի զգալի ակտիվացմամբ: Պահանջարկի պայմանների ընդլայնմանը 2026 թ. սկզբից էապես նպաստել է նաև դեպի ՀՀ այցելությունների զգալի ավելացումը:

Միևնույն ժամանակ, տնտեսական աճի կառուցվածքային առանձնահատկությունները և տարբեր ճյուղերում անհամաչափ զարգացումները որոշակի անորոշություններ են պարունակում պահանջարկի պայմանների հետագա


միտումների վերաբերյալ: Մի կողմից՝ սպառման և վարկավորման բարձր աճերի պահպանումը, արտաքին պահանջարկի հետագա ընդլայնումը, ինչպես նաև հարկաբյուջետային քաղաքականության առավել ընդլայնող դիրքի ձևավորման ռիսկերը կարող են նպաստել ավելցուկային պահանջարկի պայմանների հետագա ընդլայնմանը: Մյուս կողմից՝ հիմնական գործընկեր երկրներում տնտեսական աճի հեռանկարի վատթարացումը կարող է հանգեցնել պահանջարկի պայմանների աստիճանական թուլացմանը:

Ելնելով վերոնշյալ զարգացումներից և առկա անորոշություններից բխող հնարավոր ռիսկերի խելամիտ կառավարման սկզբունքից՝ ԿԲ-ն 2025 թ. դեկտեմբերին, շուկայի սպասումներին համահունչ, նվազեցրել է քաղաքականության տոկոսադրույքը 0.25 տոկոսային կետով, որից հետո տոկոսադրույքը թողել է անփոփոխ մինչև օգոստոս՝ կարևորելով երկու ուղղությամբ ռիսկերի կառավարման հավասարակշռումը: 2026 թ. օգոստոսի 4-ին տոկոսադրույքն անփոփոխ թողնելու որոշման շրջանակներում արձանագրվել է Ա տիպի սցենարների նյութականանալու մեծ հավանականությունը, սակայն կարևորվել է նաև Բ տիպի սցենարներից բխող մակրոտնտեսական ազդեցությունների կառավարման անհրաժեշտությունը: 2026 թ. սեպտեմբերին, կարևորելով Ա տիպի սցենարներից բխող մակրոտնտեսական ազդեցությունների կառավարման անհրաժեշտությունը, տոկոսադրույքը բարձրացվել է 0.25 տոկոսային կետով՝ սահմանվելով 6.75%:

Դիտարկվող տարվա ընթացքում շուկայական տոկոսադրույքները հիմնականում ձևավորվել են գործառնական նպատակի՝ քաղաքականության տոկոսադրույքի շուրջ: ՊՊ շուկայում եկամտաբերության կորի վարքագիծը հիմնականում արտահայտել է դրամավարկային քաղաքականության նորմալացման, զարգացող երկրների նկատմամբ ընդհանուր տրամադրվածության բարելավման, ՀՀ շուրջ աշխարհաքաղաքական ռիսկերի որոշակի թուլացման, պետական պարտքի ուղեգծի վերաբերյալ սպասումների բարելավման և որոշ այլ գործոնների ազդեցությունները:

Գծապատկեր 1


ՀՀ եկամտաբերության կորի վարքագիծը ԿԲ տոկոսադրույքի վերաբերյալ որոշումներից հետո



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ

Գծապատկեր 2

ԿԲ գործիքների և կարճաժամկետ շուկայական տոկոսադրույքների վարքագիծը



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ

Հաշվետու տարում ՀՀ տնտեսության առանձին հատվածներում դիտվող բարձր ակտիվության պարագայում պահպանվել է վարկավորման նկատմամբ բարձր պահանջարկը: Դա հատկապես արտահայտվել է տնային տնտեսություններին տրամադրված սպառողական վարկերի կայուն բարձր աճով, ինչին զուգահեռ հիպոտեկային վարկերի աճի տեմպը որոշակիորեն դանդաղել է՝ այնուամենայնիվ դեռևս մնալով բարձր:

Արտարժույթի շուկայում դիտվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի աստիճանական արժևորում, ինչն արտացոլում է ՀՀ ապրանքների, ծառայությունների և ակտիվների նկատմամբ արտաքին բարձր պահանջարկը՝ պայմանավորված նաև դեպի զարգացող տնտեսություններ ներդրողների տրամադրվածության բարելավմամբ: Ֆինանսական շուկայի բնականոն գործունեության ապահովման նպատակով, առանձին իրավիճակներում, ԿԲ-ն շուկայում իրականացրել է արտարժույթի գնման գործառնություններ:

Այս զարգացումների ներքո՝ հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում **12-ամսյա գնաճն արագացել և 2026 թ. սեպտեմբերի վերջի դրությամբ կազմել է 4.3%: 12-ամսյա բնականոն գնաճը ևս ավելացել է՝ ձևավորվելով 4.7% մակարդակում:**

2. ԳՆԱՃԻ ՏԱՐՐԵՐԸ ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

Վերջին մեկ տարվա ընթացքում գնաճն արագացել է՝ հիմնականում պայմանավորված արտաքին հատվածից ՀՀ փոխանցվող գնաճային ազդեցություններով, ներքին տնտեսությունում պահանջարկի որոշակի ընդլայնմամբ, ինչպես նաև որոշ ժամանակավոր գործոնների ազդեցությամբ:

Այսպես՝ դիտարկվող ժամանակահատվածում համաշխարհային պարենային ապրանքների կարևոր մատակարար մի շարք երկրներում եղանակային անբարենպաստ պայմանները, ինչպես նաև որոշ ապրանքների նկատմամբ համաշխարհային պահանջարկի ավելացումը հանգեցրել են առանձին ապրանքների մասով գների զգալի աճի, որը մեծ մասամբ արտացոլվել է նաև ներմուծված պարենային ապրանքների գներում: Այդուհանդերձ, վերջին ամիսներին ներմուծվող պարենային ապրանքների գնաճի տեմպը որոշակիորեն դանդաղել է՝ 2026 թ. սեպտեմբերին կազմելով տ/տ 3.9%: Հարկ է նաև նշել, որ արտաքին հատվածից փոխանցվող գնաճային ճնշումները մասամբ չեզոքացվել են ՀՀ դրամի փոխարժեքի անվանական արժևորման արդյունքում:

Հաշվետու տարվա ընթացքում, այդ թվում պայմանավորված գյուղատնտեսական բերքի համեմատաբար ավելի ցածր մակարդակով, «Միրգ» և «Բանջարեղեն» ապրանքախմբերում արձանագրվել է բարձր գնաճ, որը մասամբ մեղմվել է ՌԴ-ի կողմից կիրառված ներմուծման սահմանափակումների արդյունքում: Չնայած ժամանակահատվածի վերջում գնաճային ճնշումների որոշակի թուլացմանը՝ տարվա ընթացքում կուտակված գնաճը շարունակել է զգալիորեն գերազանցել պատմական սեզոնային միտումները:

Բնականոն գնաճը, որի կազմում չեն ներառվում սեզոնային պարենային ապրանքներն ու կարգավորվող ծառայությունները, շարունակել է դրսևորել արագացման միտումներ՝ ողջ հաշվետու ժամանակահատվածում պահպանվելով թիրախից բարձր և սեպտեմբերին կազմելով տ/տ 4.7%: Բնականոն գնաճի կառուցվածքում հիմնականում զգալի աճ է արձանագրվել ոչ սեզոնային պարենային ապրանքների և չկարգավորվող ծառայությունների գների մասով: Մասնավորապես, չնայած վերջին ամիսներին որոշակի մեղմացմանը, դեռևս բարձր մակարդակներում են պահպանվում «Միս» և «Կաթնամթերք» ապրանքախմբերի գնաճերը, որոնք մեծապես պայմանավորված են ինչպես առաջարկի, այնպես էլ պահանջարկի գործոններով: Միևնույն ժամանակ, բնականոն գնաճի տարրերից «Ծխախոտային արտադրատեսակներ» և «Ալկոհոլային խմիչքներ» ապրանքախմբերի գների աճը հաշվետու ժամանակահատվածում կրել է 2026 թ. ակցիզային հարկի դրույքաչափերի փոփոխության գնաճային ազդեցությունը՝ ձևավորվելով ՀՀ ԿԲ գնահատականի շուրջ:


Հաշվետու ժամանակահատվածում դիտվել է նաև ծառայությունների գնաճի որոշակի արագացում՝ մեծապես պայմանավորված օդային տրանսպորտի սակագների և բնակարանների վարձավճարների աճով: Վերջինս ժամանակահատվածի վերջում զգալիորեն արագացել է՝ զուգորդվելով դեպի ՀՀ այցելությունների էական ավելացմամբ: Վերջինս արտացոլվում է նաև արտաքին պահանջարկի նկատմամբ մեծ զգայունություն ունեցող որոշ ծառայությունների, մասնավորապես՝ հյուրանոցների, սրճարանների, տրանսպորտային փոխադրումների գնաճի արագացմամբ: Զուգահեռաբար՝ ծառայությունների գնաճին նպաստել է նաև 2026 թ. հունվարից

առողջության համընդհանուր ապահովագրության համակարգի ներդրմամբ պայմանավորված բուժծառայությունների գների աճը, որը սկզբնական շրջանում հիմնականում կրել է գների մակարդակի մեկանգամյա ճշգրտման բնույթ: Հետագա ամիսներին գների աճի տեմպի որոշակի թուլացումից հետո, ոլորտում ծախսերի շարունակական ավելացման պայմաններում, վերջին շրջանում կրկին արձանագրվել է բուժծառայությունների գների աճի արագացում: Այդուհանդերձ, հարկ է նշել, որ ծառայությունների գնաճը շարունակում է ձևավորվել թիրախին մոտ՝ 2.5-3% միջակայքում:

Հաշվետու ժամանակահատվածում ոչ արտահանելի կոշտ գների ինդեքսը, որը ներքին տնտեսության պահանջարկի պայմանները բնութագրող կարևոր ցուցիչ է, արձանագրել է զգալի արագացման միտում և սեպտեմբերին ձևավորվել ՀՀ ԿԲ թիրախից բարձր՝ տ/տ 4.4% մակարդակում: Սա մեծապես պայմանավորվել է արտաքին պահանջարկի ընդլայնման ֆոնին բնակարանների վարձակալական վճարների աճով: Այդուհանդերձ, մի շարք այլ կոշտ գներով ծառայությունների գնաճը ևս արագացել է՝ մատնանշելով ներքին տնտեսությունում պահանջարկի ճնշումների հնարավոր ուժեղացումը: Միաժամանակ, չնայած ՈԱԿԳԻ զամբյուղում գնաճային ճնշումների որոշակի ընդլայնմանը, առանձին ցուցիչների, մասնավորապես՝ գների փոփոխություն արձանագրող ապրանքների և ծառայությունների կշռի հարաբերական կայունությունը կարող է վկայել գնաճային սպասումների կայունացման միտումների մասին:

Գծապատկեր 3

Հաշվետու ժամանակահատվածում ընդհանուր գնաճի արագացմանը հիմնականում նպաստել է ոչ սեզոնային պարենային ապրանքների գների աճը



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ԿԲ հաշվարկներ

Աղյուսակ 1

Ապրանքախմբի անվանումը	Կշիռը սպառողական զամբյուղում, 2026 թ., %	12-ամսյա գնաճը, %	Նպաստումը գնաճին, տ.կ.
		2026 թ. սեպտեմբեր	2026 թ. սեպտեմբեր
Բնականոն գնաճ	**77.2**	**4.7**	**3.7**
Հացաբուլկեղեն և ձավարեղեն	7.4	2.7	0.2
Միս	10.7	10.5	1.1
Յուղեր և ճարպեր	2.0	2.0	0.1
Շաքար	0.5	4.5	0.0
Կաթնամթերք	4.2	7.0	0.3
Ալկոհոլային խմիչքներ	2.0	8.3	0.0
Ծխախոտային արտադրատեսակներ	3.0	6.9	0.2
Հագուստ	2.0	5.2	0.1
Կոշիկ	1.1	3.6	0.0
Կենցաղային սարքեր	0.7	-0.3	-0.0
Վառելիք	4.9	2.4	0.1
Օդային մարդատար տրանսպորտի ծառայություն	1.5	4.8	0.1
Ամբուլատոր ծառայություն	2.7	6.9	0.2
Փաստացի վճարվող վարձավճար լրացուցիչ բնակատեղիների համար	2.7	8.5	0.2
Ռեստորաններ և հյուրանոցներ	2.4	5.4	0.1
Սեզոնային պարենային ապրանքներ	**9.8**	**7.4**	**0.6**
Ձու	1.3	23.8	0.3
Մրգեր	3.3	7.3	0.3
Բանջարեղեն	5.3	3.9	0.0
Կարգավորվող ծառայություններ	**13**	**0.3**	**0.0**
Ապրանքների և ծառայությունների այլ խմբեր			
Ներմուծված պարենային ապրանքներ	**14.5**	**3.9**	**0.6**
Տեղական արտադրության պարենային ապրանքներ	**20.0**	**8.1**	**1.6**
Չկարգավորվող ծառայություններ	**20.7**	**4.5**	**0.9**

Աղյուսակ 2

Ապրանքախմբի անվանումը	Կշիռը սպառողական զամբյուղում, 2025 թ., %	12-ամսյա գնաճը, %			
		2025 թ. դեկտեմբեր	2026 թ. մարտ	2026 թ. հունիս	2026 թ. սեպտեմբեր
Բնականոն գնաճ	**77.2**	**4.3**	**4.7**	**4.9**	**4.7**
Հացաբուլկեղեն և ձավարեղեն	8.2	3.9	3.5	2.8	2.7
Միս	10.8	7.9	9.4	12.5	10.5
Յուղեր և ճարպեր	2.3	6.8	7.5	4.6	2.0
Շաքար	0.5	1.1	2.8	-0.6	4.5
Կաթնամթերք	4.3	6.1	7.9	7.5	7.0
Ալկոհոլային խմիչքներ	2.0	5.5	6.9	8.3	8.3
Ծխախոտային արտադրատեսակներ	2.5	8.7	9.7	6.9	6.9
Հագուստ	1.9	-0.2	1.8	3.4	5.2
Կոշիկ	1.0	1.0	-0.4	2.1	3.6
Կենցաղային սարքեր	0.6	-0.2	-1.3	1.6	-0.3
Վառելիք	5.1	-0.3	-1.2	1.8	2.4
Օդային մարդատար տրանսպորտի ծառայություն	1.5	26.6	13.9	0.7	4.8
Ամբուլատոր ծառայություն	2.7	2.7	6.1	6.0	6.9
Փաստացի վճարվող վարձավճար լրացուցիչ բնակատեղիների համար	2.6	-3.5	-2.4	1.4	8.5
Ռեստորաններ և հյուրանոցներ	2.2	2.9	4.3	4.1	5.4
Սեզոնային պարենային ապրանքներ	**9.6**	**-2.8**	**7.3**	**11.3**	**7.4**
Ձու	1.3	7.2	30.1	29.9	23.8
Մրգեր	3.1	0.7	5.6	16.8	7.3
Բանջարեղեն	5.1	-7.5	3.1	3.1	3.9
Կարգավորվող ծառայություններ	**13.2**	**1.9**	**0.1**	**0.5**	**0.3**
Ապրանքների և ծառայությունների այլ խմբեր					
Ներմուծված պարենային ապրանքներ	**15.4**	**5.3**	**5.5**	**4.2**	**3.9**
Տեղական արտադրության պարենային ապրանքներ	**19.8**	**7.7**	**8.5**	**9.6**	**8.1**
Չկարգավորվող ծառայություններ	**20.6**	**3.8**	**4.3**	**3.6**	**4.5**